ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*28 օգոստոսի 2017թ. N 42-Ն*

## 2. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին»ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» 16.12.2016թ. ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ կետերի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով.

*Իջևանի համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել Իջևան համայնքի տեղական տուրքերի դրույքաչափերը:

1. Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք օրացուցային տարվա համար 200000 դրամ:
2. Խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և ծառայության օբյեկտներում վաճառքի թույլտվության համար տեղական տուրք օրացուցային տարվա համար սահմանվում է 60000 դրամ:
3. ՀՀ համայնքների խորհրդանիշերը /զինանշան, անվանում և այլ/ որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար օրացուցային տարվա համար 100000 դրամ:
4. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության օրացուցային տարվա համար 500000 դրամ:
5. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար

ա/3 հա-ից 5հա մակերես ունեցող գերեզմանատների համար 2500.000 դրամ
բ/ 5հա-ից մինչև 7հա մակերես ունեցող գերեզմանատների համար 5.000.000 դրամ
գ/ 7հա-ից մինչև 10հա մակերես ունեցող գերեզմանատների համար 7.000.000 դրամ
դ/ 10հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար 10.000.000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*28 օգոստոսի 2017թ. N 43*

## 3. «ԻՋԵՎԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ԲԱԺՆՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ավագանին նշում է, որ համայնքապետարան է դիմել «Իջևանի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրինությունը՝ առաջարկելով դպրոցի պարարվեստի բաժնում երեխաների ուսուցումը սահմանել 6-9 տարեկան դպրոց ընդունվող երեխաների համար 7 տարի, 9 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար 5 տարի: Նկատի ունենալով, որ դպրոցն ունի բոլոր անհրաժեշտ պայմանները, պարարվեստի ուսուցումը արդյունավետ կազմակերպելու համար և հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 18.07.2017թ. թիվ 792-Ն հրամանը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

Տալ հավանություն Իջևանի քաղաքապետի առաջարկությանը՝ «Իջևանի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի պարարվեստի բաժնում երեխաների ուսուցումը սահմանել՝ 6-9 տարեկան դպրոց ընդունվող երեխաների համար 7 տարի, 9 տարեկան և բարձր տարիքում դպրոց ընդունվող երեխաների համար 5 տարի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
*28 օգոստոսի 2017թ. N 44*

## 4. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային. մրցութային. ինչպես նաև օրենքով սահմանված կարգով առանց մրցույթի կառուցապատման իրավունքով հողամասեր հատկացնելու մասին:

Ղեկավարվելով..Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և ՀՀ ..Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1.Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը համաձայն աղյուսակի.

| հհ | Նպատակը | Հասցե | Մակերեսը/քմ |
|---|---|---|---|
| 1 | Ընդհանուր օգտագործում | Ուսանողական փ. | 19.83 |
| 2 | Ընդհանուր օգտագործում | Ուսանողական փ. | 19.95 |
| 3 | Բնակելի կառուցապատում | Մեհրաբյան փ. | 150.0 |
| 4 | Հասարակական կառուցապատում | Մեհրաբյան փ. | 176.6 |
| 5 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ. | 63.1 |
| 6 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ. | 36.0 |
| 7 | Ընդհանուր օգտագործում | Ս. Օհանյան փ. | 400.0 |
| 8 | Ընդհանուր օգտագործում | Անկախության փ. | 63.3 |
| 9 | Արդյուն.. ընդերքօգտ. և այլ արտադրական նշանակության | Արցախյան փ. | 1399.0 |
| 10 | Բնակելի կառուցապատում | Իջևանյան փ. | 419.4 |
| 11 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտո./ | Այանյան փ. | 26.7հող/26.7շին |
| 12 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտո./ | Երիտասարդական փ. | 27.2հող/27.2շին |
| 13 | Ընդհանուր օգտագործում | Մետաղագործների փ. | 26.6 |
| 14 | Ընդհանուր օգտագործում | Ազատամարտիկների փ. | 31.9 |
| 15 | Բնակելի կառուցապատում | Սպանդարյան փ. | 53.97 |
| 16 | Բնակելի կառուցապատում /ինք. ավտո./ | Սպանդարյան փ. | 60.48հող/60.48շին |

| | | | |
|---|---|---|---|
| 17 | Ընդհանուր օգտագործում | Սպանդարյան փ. | 19.8 |
| 18 | Բնակելի կառուցապատում | Երևանյան փ. | 1600.0 |
| 19 | Բնակելի կառուցապատում /հնք. ավտո./ | Անկախության փ. | 19.8hող/19.8շին |
| 20 | Գյուղատնտեսական նշանակության | Երևանյան փ. | 1000.0 |
| 21 | Ընդհանուր օգտագործում | Ս. Օհանյան փ. | 1577.9 |
| 22 | Ընդհանուր օգտագործում | Աբովյան փ. | 46.9 |
| 23 | Ընդհանուր օգտագործում | Աբովյան փ. | 6.2 |

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
*28 օգոստոսի 2017թ. N 45*

## 5. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Իջևանյան փողոցում 419.4քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0132-0053/ հողամասը կադաստրային քարտեզում արտացոլված է, որպես ֆիզիկական անձանց պատկանող բնակելի կառուցապատման հողամաս, սակայն որևէ անձի անվամբ հաշվառված չէ և դրա նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունք գրանցված չէ:

Ղեկավարվելով << ,,Հողային օրենսգրքի,, 3-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1.Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը Իջևան քաղաքի Իջևանյան փողոցում 419.4քմ մակերեսով /ծածկագիր 11-001-0132-0053/ հողամասի նկատմամբ Իջևան համայնքի սեփականության իրավունքը գրանցելուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**

# ՈՐՈՇՈՒՄ

*28 օգոստոսի 2017թ. N 46*

## 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեի 28.06.2017թ N 06/11.2/3854-17 գրությունը և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 89 դրական եզրակացությունն, ու ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասով, „Քաղաքաշինության մասին„ ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի (բնակավայրերի) գլխավոր հատակագծի, Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի 5/15 հասցեի, 0.05 հա մակերեսով հողամասի /11-001-0111-0001-01 ծածկագրով հողամասի մի մաս/ նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը համաձայն հավելվածի.

Հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը

| Հողամասի առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակության | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության |

2. Հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 „Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում„ շինարարական նորմերի պահանջները:

3. „Քաղաքաշինության մասին„ ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի 30-րդ մասով սահմանված կարգով նշված փոփոխությունն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական

քարտեզում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1720-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող հետևանքները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## Իջևան քաղաքային համայնքի ավագանի
## Ո Ր Ո Շ Ու Մ

*28 օգոստոսի 2017թ. N 47*

### 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ՀՀ ԿԱ Քաղաքաշինության պետական կոմիտեի 07.07.2017թ N 06/11.2/4033-17 գրությունը և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 92 դրական եզրակացությունն, ու ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասով, „Քաղաքաշինության մասին„ ՀՀ օրենքի $14^3$ հոդվածով, ՀՀ կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի (բնակավայրերի) գլխավոր հատակագծում հետևյալ հողամասերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը համաձայն հավելվածի.

Հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը

| Հողամասի առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 1.3173հա, 0.00039հա, 0.093հա, 0.0033հա, 0.00098հա, 0.0012հա, 0.0004հա, 0.0008հա, 0.0007հա, 0.00085հա մակերեսներով անտառային նպատակային նշանակության հողեր | 1.3173հա, 0.00039հա, 0.093հա, 0.0033հա, 0.00098հա, 0.0012հա, 0.0004հա, 0.0008հա, 0.0007հա, 0.00085հա մակերեսներով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության, կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության |

2. Հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով ՀՀՇՆ 30-01-2014 „Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում„ շինարարական նորմերի պահանջները:

3. „Քաղաքաշինության մասին„ ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի 30-րդ մասով սահմանված կարգով նշված փոփոխություններն արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1720-Ն որոշմամբ հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող հետևանքները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*28 օգոստոսի 2017թ. N 48*

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԼԲՈՒԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 101 ՇԵՆՔԻ ԹԻՎ 4 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 101 շենքի թիվ 4 բնակարանը հանդիսանում է համայնքային սեփականություն:
Հիմք ընդունելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ բնակարանի կարգապահ վարձակալ են հանդիսանում Իվան Ռաֆիկի Խեչյանը, Ռաֆիկ Իվանի Խեչյանը, Անուշ Ղահրամանի Խեչյանը, Ռաֆիկ և Դավիթ Իվանի Խեչյանները,որոնք ժամանակին չեն կարողացել սեփականաշնորհել բնակարանը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. Տալ հավանություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 101 շենքի թիվ 4 բնակարանը, որը հանդիսանում է համայնքային սեփականություն, անհատույց օտարել Իվան Ռաֆիկի Խեչյանին, Ռաֆիկ Իվանի Խեչյանին, Անուշ Ղահրամանի Խեչյանին, Ռաֆիկ և Դավիթ Իվանի Խեչյաններին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ

*28 օգոստոսի 2017թ. N 49 Ն*

9. ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ և ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԵՐԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ 2017թ. բյուջեի եռամսյակային համամասնությունների պահպանման նպատակով և ի կատարումն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի, անհրաժեշտություն է առաջացել բյուջեի եկամտային և ծախսային մասը ավելացնել 590.0 հազ. դրամ, բացի այդ բյուջեի ծախսային մասում պետք է կատարել 5020.0 հազ. դրամի վերաբաշխում:

Հաշվի առնելով վերոհիշյալը

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Իջևան համայնքի 2017թ. բյուջեի եկամտային և ծախսային մասն ավելացնել 590.0 հազ. դրամ: Եկամտային մասի ավելացված գումարից 350.0 հազ. դրամ հատկացնել 45.11. բաժնի 900375001291 հաշվին, 240.0 հազ. դրամ 49. բաժնի 900375121507 հաշվին: Բյուջեի ծախսային մասում 9.5.1. բաժնի 4511 հոդվածից կրճատել 3450.0 հազ. դրամ, այդ թվում «Իջևանի երաժշտական միջնակարգ դպրոց» ՀՈԱԿ-ից 1250.0 հազ. դրամ, «Արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ից 1200.0 հազ. դրամ, «Ավանդույթ» ՀՈԱԿ-ից 1000.0 հազ. դրամ. 8.2. բաժնի 4511 հոդվածից / «Թանգարան» ՀՈԱԿ-ից/ 500,0 հազ. դրամ, համայնքապետարանի պահպանման ծախսերի 1.1.1 բաժնի 4214 հոդվածից 180.0 հազ. դրամ, 4252 հոդվածից 300.0 հազ. դրամ:
   Վերոնշյալ գումարը 5020.0 հազ. դրամ հատկացնել 6.4 բաժնի /փողոցային լուսավորություն/ 4212 հոդվածին:
2. Հաստատել 2017թ. տարեկան ճշգրտված բյուջեն 538590,7 հազ. դրամ եկամուտների 538664,5 հազ. դրամ վարչական բյուջեի, 280.9 հազ. դրամ ֆոնդային բյուջեի ընդամենը 538945,4 հազ. դրամ:
   Բյուջեի դեֆիցիտը կազմում է 364.7 հազ դրամ, որի ծածկմանն է ուղղված 364.7 հազ դրամ տարեսկզբի ազատ մնացորդը, այդ թվում 83.8 հազ դրամ վարչական, 280.9 հազ դրամ ֆոնդային բյուջեի մասով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*28 օգոստոսի 2017թ. N 50*

## 10. ՀՈՎՍԵՓ ՌԱՖԱՅԵԼԻ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ ԻՋԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ավագանին նշում է, որ Իջևան համայնքի թիվ 1 դպրոցի լողավազանը տասնամյակներ շարունակ չի վերանորոգվել և գտնվում էր անօգտագործելի վիճակում: Լողի Հայկական դաշնության նախագահ Հովսեփ Ռաֆայելի Մեսրոպյանի աջակցությամբ և ջանքերով լողավազանը հիմնանորոգվել է, վերակառուցվել և հիմնվել լողի մանկապատանեկան մասնագիտացված դպրոց: Այն տարածաշրջանում միակ մասնագիտացված լողավազանն է, որից օգտվում են ոչ միայն Իջևանի, այլ նաև մոտակա համայնքների բնակիչները:

Հաշվի առնելով վերոհիշյալը և ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 24-րդ կետով.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ Հովսեփ Ռաֆայելի Մեսրոպյանին շնորհել Իջևան համայնքի պատվավոր քաղաքացու կոչում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ | ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ |
| ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*28 օգոստոսի 2017թ. N 51*

## 11. «ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ավագանին նշում է, որ անհրաժեշտություն է առաջացել «Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն» հիմնարկի հաստիքացուցակի դրույքաչափում կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով վերոհիշյալը և ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ «Իջևանի քաղաքային կոմունալ ծառայություն» հիմնարկի հաստիքացուցակի իրավաբանի դրույքաչափը սահմանել 124 հազ. դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ
ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԱՐՏՈՒՇ ՕՀԱՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ